ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄՓՈՓ ԶԵԿՈՒՅՑ

ՆԱԽԱԲԱՆ

Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ որոշմամբ հաստատվեցին Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) և դրանից բխող գործողությունների ծրագիրը (այսուհետ՝ Գործողությունների ծրագիր):

Ռազմավարության և գործողությունների ծրագրի կատարման 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների հաշվետվությունները հրապարակվել են Ռազմավարության և Գործողությունների մշտադիտարկման նպատակով ստեղծված կայքէջում (https://datairav.am/): Գործողությունների ծրագրով 2023 թվականի ընթացքում կատարման ենթակա են եղել սահմանված 12-ից 12 նպատակների 44 գործողություններ, որոնցից կատարվել են 38-ը: Չեն կատարվել կամ մասամբ են կատարվել թվով 6 գործողություններ:

2023 թվականի ընթացքում կատարման ենթակա են եղել շուրջ 98 արդյունքային ցուցանիշներ և փաստացի կատարվել են 58-ը: Իր հերթին, 2023 թվականի համար նախատեսված և չկատարված արդյունքային ցուցանիշների մեծ մասը գտնվում է ավարտական փուլում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

ՆՊԱՏԱԿ 1. «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ 3

ՆՊԱՏԱԿ 2. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ՝ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՄԲ 4

ՆՊԱՏԱԿ 3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 5

ՆՊԱՏԱԿ 5. ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 7

ՆՊԱՏԱԿ 6. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ 7

ՆՊԱՏԱԿ 8. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 9

ՆՊԱՏԱԿ 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 10

ՆՊԱՏԱԿ 10. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 11

ՆՊԱՏԱԿ 11. ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 12

ՆՊԱՏԱԿ 12. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՅԼ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 13

ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 15

ՆՊԱՏԱԿ 1. «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակ 1-ի շրջանակներում 2023 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում ներդրվել է «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի քաղաքացիական գործերով էլեկտրոնային մոդուլը (cabinet.armlex.am), որը թույլ է տալիս քաղաքացիական դատավարությունն իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ հայցի հարուցումից մինչև եզրափակիչ դատական ակտի հրապարակում և կատարողական թերթի տրամադրում: Մոդուլը իր մեջ ներառում է բոլոր այն փաստաթղթերը, որոնք ձևավորվել են կամ ներկայացվել են համակարգի միջոցով, ինչպես նաև դրանից դուրս ստեղծված կամ ներկայացված նյութերի սկանավորված տարբերակները (ներառյալ՝ իրեղեն ապացույցների լուսանկարները և տեսագրությունները):

Նշվածի նմանությամբ մշակվել է նաև սնանկության գործերով էլեկտրոնային մոդուլը, որը դատավարական գործառույթներից բացի կապահովի նաև սնանկության կառավարիչների ընտրության, նշանակման և աճուրդների գործընթացն էլեկտրոնային եղանակով իրականացնելը:

Բացի այս մշակվել է էլեկտրոնային հաշտարարության հարթակը, որի միջոցով հաշվառել հաշտարարներին Արդարադատության նախարարության ռեեստրում, նրանց նշանակումը կամ ընտրությունը կատարել ինքնաշխատ համակարգի միջոցով՝ վիճակահանությամբ, ինչպես նաև ներկայացնել դիմումներ, պահանջագրեր, տեսնել հաշտարարներին, ստանալ ծանուցումներ և այլն:

Միևնույն ժամանակ, գործարկվել է մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգը («e-criminal case»), որն ապահովում է քրեական գործերի մինչդատական վարույթի ընթացքում գեներացվող տեղեկատվության ինտեգրումը և արդյունավետ օգտագործումը պետական մարմինների կողմից:

ՆՊԱՏԱԿ 2. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ՝ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՄԲ

2023 թվականի ընթացքում փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույցի ձևավորման կառուցակարգերը սահմանելու նպատակով Արդարադատության նախարարության կողմից մշակվել են օրենսդրական փոփոխություններ նախատեսող 2 նախագծեր: Որպես առաջին տարբերակ քննարկվել և մշակվել է «Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծը, որով նախատեսվել է փաստահավաք գործունեություն իրականացնելու լիազորությունը վերապահել այդ նպատակով ձևավորվելիք Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր գործող Փաստահավաք խորհրդին: Որպես երկրորդ տարբերակ քննարկվել և մշակվել է «Հանրային խորհրդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, համաձայն որի նախատեսվել է փաստահավաք գործառույթները վերապահել այդ նպատակով ձևավորվելիք Հանրային խորհրդին կից գործող առանձին հանձնաժողովի: Նախագծերը տարբեր ձևաչափերով և մի քանի անգամ քննարկվել են շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ ուրվագծելու համար առավել արդյունավետ մոտեցումները:

ՆՊԱՏԱԿ 3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2023 թվականի ընթացքում ապահովվել է Սահմանադրական բարեփոխումների խորհրդի և մասնագիտական հանձնաժողովի գործունեության ապահովումը:

Մասնավորապես, 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում՝ Վարչապետի 2022 թվականի հունվարի 27-ի թիվ 111-Ա որոշման հիման վրա ձևավորված Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը (այսուհետ սույն նպատակի ներքո նաև՝ Խորհուրդ) շարունակել է իր գործունեությունը: Ինչ վերաբերում է Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովին (այսուհետ սույն նպատակի ներքո նաև՝ Հանձնաժողով), 2023 թվականի փետրվարի 3-ին ընտրվել են Հանձնաժողովի նոր անդամները և ընդունվել է Հանձնաժողովը ձևավորելու և Հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին որոշում:

2023 թվականի ողջ ընթացքում Խորհուրդը Հանձնաժողովի հետ համատեղ նիստերի, արտագնա քննարկումների միջոցով շարունակել է իր գործունեությունը և Հանձնաժողովը 2023 թվականի հոկտեմբերի Խորհրդին է ներկայացրել Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի առաջին նախագիծը, որը մի շարք քննարկումների արդյունքում լրամշակվել է և նախնական տարբերակով ներկայացվել Վարչապետի աշխատակազմ:

Սահմանադրական բարեփոխումներից զատ տարբեր ձևաչափերով քննարկումներից, ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի եզրակացության հաշվառմամբ, մշակվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծը և հարակից փաթեթը:

ՆՊԱՏԱԿ 4. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2023 թվականի ընթացքում դատական համակարգի բարեփոխումներ շրջանակում՝

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի փոխարեն ստեղծվել և ներկայումս գործում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանները:

2. Ներդրվել են իրավական կառուցակարգեր, որոնց հիման վրա դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը: Բացի այդ նախատեսվել է հատուկ կարգով որակավորման ստուգում անցկացնելու միջոցով դատավորների թեկնածուների ցուցակը համալրելու հնարավորություն, որի դեպքում անձն ընդգրկվելու է ցուցակում՝ առանց Արդարադատության ակադեմիայում ուսուցում անցնելու: Այդպիսով, ներկայումս գործում են դատավորների ներգրավման 2 տարբերակված ընթացակարգեր:

3. Ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-335-Ն սահմանադրական օրենքը, որով նախատեսվել են Բարձրագույն դատական խորհրդի կարգապահական գործերով որոշումները բողոքարկելու կառուցակարգեր:

4. Մշակվել է օրենսդրական փաթեթ, որով առաջարկվում է Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամների թիվը ավելացնել 3-ով:

6. Բացի այդ ընդունվել է օրենսդրական փաթեթ, որով ներդրվել են դատավորների, ինչպես նաև դատախազների և քննիչների բարեվարքության

պարբերական ստուգման մեխանիզմներ: Ընդ որում, կներդրվեն բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգեր ուղղված նաև Քննչական կոմիտեի ինքնավար պաշտոններում նշանակման ենթակա թեկնածուների և առաջխաղացման ենթակա ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեում առաջխաղացման ենթակա ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար: Նշվածը ապահովելու է վերոգրյալ պաշտոնատար անձանց գործունեությունը պարբերաբար ուսումնասիրելու հնարավորություն՝ կոռուպցիոն երևույթներին ներգրավվածությունը բացահայտելու տեսանկյունից:

ՆՊԱՏԱԿ 5. ՔՐԵԱՀՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Քրեական ոլորտի բարեփոխումների համատեքստում քննչական բոլոր գործողությունների տեսաձայնագրման համար անհրաժեշտ գործիքակազմի ձեռք բերման նպատակով մշակվել են տեսախցիկների բավարար գործնական կիրառելիության ապահովման համար անհրաժեշտ տեխնիկական բնութագրիչները և կազմվել են տեխնիկական անձնագրեր և այնուհետև ձեռք են բերվել անհրաժեշտ տեսախցիկները (Քննչական կոմիտե՝ 1612, Հակակոռուպցիոն կոմիտե՝ 80, Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտ՝ 40 տեսախցիկներ):

Բացի այս ձեռք են բերվել քննչական գործողությունների տեսաձայնագրությունների վերբեռնման և կառավարման էլեկտրոնային համակարգի սերվերային տնտեսություններ, և այժմ քննչական գործողությունների արդյունքները կարող են պահպանվել համապատասխան սերվերային տնտեսությունում՝ նախկին սկավառակների կամ համանման կրիչների փոխարեն:

ՆՊԱՏԱԿ 6. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

Քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխումների համատեքստում ուսումնասիրվել և վերանայվել են Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցադիմումը վերադարձնելու կառուցակարգերը, ինչպես նաև Քաղաքացիական դատավարության բարեփոխումների շրջանակներում և դատարանների ծանրաբեռնվածությունը թոթափելու և փոքր հայցապահանջներով քաղաքացիական վեճերի (գործերի) արտադատական լուծման արդյունավետության բարձրացումն ապահովելու նպատակով Ազգային ժողովի կողմից 2023 թվականի հունիսի 26-ին ընդունվել է ««Նոտարիատի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-229-Ն օրենքը, որով 2 միլիոն դրամը չգերազանցող գումարի բռնագանձման գործերը դատարաններից վերապահվել են նոտարներին, ինչի արդյունքում նախատեսվում է ընդհանուր իրավասության դատարանների՝ քաղաքացիական գործերով ծանրաբեռնվածության թեթևացում: Նոտարին նշված պահանջով դիմում կարող են ներկայացնել միայն բանկերը, վարկային կազմակերպությունները, ինչպես նաև կոմունալ ծառայությունների՝ էներգետիկայի, ջրային և հեռահաղորդակցության ոլորտներում ծառայություն մատուցող անձինք՝ իրենց և սպառողների միջև կնքված պայմանագրերի հիման վրա: Այս մեխանիզմն արդեն իսկ կիրառվում է 2023 թվականի դեկտեմբերի 11-ից:

Բացի այս գույքագրվել են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում արձանագրված խնդիրները, որոնց հիման վրա կազմվել է զեկույց, իսկ վերջինիս հիման վրա մշակվել և Ազգային ժողով է Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծ:

Իր հերթին, քաղաքացիական դատավարության շրջանակում էլեկտրոնային գործիքների կիրառման իրավական հիմքերը ապահովելու նպատակով ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-11-Ն օրենքը:

Քաղաքացիական իրավունքի բարեփոխումների կապակցությամբ ուսումնասիրվել են պարտավորությունների կատարման ապահովման իրավական կարգավորումները և դրանցում համապատասխան փոփոխությունների կատարման կարիքները, որի արդյունքում մշակվել է Քաղաքացիական օրենսգրքում և հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագծեր՝ առաջարկելով բարելավել շարժական գույքի գրավի առնչությամբ իրավակարգավորումները:

ՆՊԱՏԱԿ 7. ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Վարչական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում գույքագրված խնդիրների հիման վրա մշակվել է Վարչական դատավարության օրենսգրքում և հարակից օրենքում փոփոխություններ նախատեսող փաթեթ, որով առաջարկվում է նախատեսել դատական ակտերի անվերապահ բեկանման հիմքեր, վերանայվել են պետական տուրքին, դատական ծանուցմանը, արագացված դատաքննությանը վերաբերող կարգավորումները և լուծում է տրվել գործնականում առաջացող մի շարք խնդիրների:

Իր հերթին, վարչական դատավարության շրջանակում էլեկտրոնային գործիքների կիրառման իրավական հիմքերը ապահովելու նպատակով 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունվել է ՀՕ-12-Ն օրենքը:

Հարկ է ընդգծել նաև, որ 2023 թվականի ընթացքում մշակվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը:

ՆՊԱՏԱԿ 8. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Սնանկության ոլորտի բարեփոխումների համատեքստում միջազգային և տեղական փորձագետների ներգրավմամբ, նախաձեռնել է համակարգային, համապարփակ և լիարժեք սնանկության օրենսդրությանն ուղղված հայեցակարգ մշակելու գործընթաց, որի շրջանակներում մշակվել է նաև սնանկության օրենսգրքի հայեցակարգի նախագծման ուղենիշների վերաբերյալ զեկույցը: Ըստ այդմ, վերհանված խնդիրների և իրականացված ուսումնասիրությունների հիման վրա մշակվել է սնանկության ոլորտի համակարգային, համապարփակ և լիարժեք օրենսդրություն մշակելուն ուղղված հայեցակարգ:

Իր հերթին, սնանկության վարույթի շրջանակում էլեկտրոնային գործիքների կիրառման իրավական հիմքերը ապահովելու և դրանց համապատասխանեցնելու նպատակով մշակվել է համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագիծ և ներկայացվել Ազգային ժողով:

ՆՊԱՏԱԿ 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Կարևորելով վեճերի այլընտրանքային եղանակների զարգացումը շարունակվել են բարեփոխումները արբիտրաժի և հաշտարարության ոլորտներում:

Մասնավորապես, հիմնադրվել և այժմ գործում է Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը, որը կարող է ապահովել ինչպես տեղական, այնպես էլ տարածաշրջանային և միջազգային վեճերի արբիտրաժային կարգով լուծումը, հաշտարարության իրականացումը և նպաստել վեճերի այլընտրանքային լուծման եղանակների մշակույթի զարգացմանը Հայաստանում: Կենտրոնի պատշաճ գործունեության ապահովման նպատակով հաստատվել է դրա կանոնադրությունը, ընդունվել են արբիտրաժային և հաշտարարության կանոնները, ինչպես նաև անհրաժեշտ ներքին իրավական այլ ակտերը: Միևնույն ժամանակ, Կենտրոնի գործունեության ապահովման նպատակով վարձակալվել է տարածք

Արշակունյաց պողոտա 51 հասցեում: Կենտրոնի գործունեության ֆինանսավորման նպատակով ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի միջոցներից որպես դրամաշնորհ կենտրոնին հատկացվել է 301 մլն ՀՀ դրամ, ձեռք են բերվել գույքային անհրաժեշտ միջոցները, համալրվել է աշխատակազմը:

Հաշտարարության զարգացման համատեքստում, ընդունվել են «Հաշտարարության մասին» օրենքի փոփոխությունների կիրարկման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերը, որոնցով սահմանվել են անհրաժեշտ պայմաններ և կառուցակարգեր նոր հաշտարարներ ներգրավելու, նրանց ուսուցումն ու վերապատրաստումն իրականացնելու, հաշտարարների ռեեստրի վարման և ընտրության և առցանց հաշտարարության իրականացման համար: Բացի այս, կազմակերպվել է հաշտարարների որակավորման նպատակով իրականացվող ուսուցման և վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են ինչպես արդեն գործող հաշտարարներ, որոնք վերապատրաստվել են, այնպես էլ նոր հավակնորդներ, որոնք դասընթացին մասնակցելու արդյունքում իրավունք են ստացել մասնակցել արտոնագրված հաշտարարների որակավորման ստուգմանը: Իրականացվել է արտոնագրված հաշտարարների որակավորման ստուգում, որին մասնակցել են 14 հավակնորդներ: Որակավորման ստուգման երկու փուլերը հաջողությամբ հաղթահարել և գործող հաշտարարներին են միացել 14 արտոնագրված հաշտարարներ:

ՆՊԱՏԱԿ 10. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Իրավաբանական օգնության ոլորտի բարեփոխումների առնչությամբ կարևորելով քաղաքացիների անվճար իրավաբանական օգնության պատշաճ ապահովումը 10 հաստիքով ավելացվել է հանրային պաշտպանների կազմը:

ՆՊԱՏԱԿ 11. ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Հարկադիր կատարման բարեփոխումների կապակցությամբ 25 տարի առաջ ընդունված ԴԱՀԿ օրենքի փոխարեն մշակվել է «Կատարողական վարույթի մասին» նոր օրենքի և դրանից բխող երեսունից ավելի հարակից օրենքների նախագծերի փաթեթը, որոնցով առաջարկվում է կատարողական վարույթի հետ կապված նորմերը կենտրոնացնել և վարույթը համապարփակ կանոնակարգել նոր օրենքով, ապահովել եվրոպական չափանիշներին ամբողջությամբ համապատասխանող նոր օրենքի ընդունումը, հստակ սահմանել առանձին խումբ կատարողական վարույթների իրականացման առանձնահատկությունները, հստակեցնել կատարողական վարույթի կասեցման, կարճման, ավարտի հիմքերը և դրանց իրավական հետևանքները, վերանայել կատարողական ծախսերի հաշվարկման համակարգը՝ ապահովելով կոնկրետ կատարողական վարույթի շրջանակում իրականացված գործողությունների և գանձվող վճարների միջև կապը, ներդնել ոչ դրամական պահանջների կատարման նոր միջոցներ, նախատեսել առանձին տեսակի գույքերի բռնագանձման առանձնահատկությունները, ներդնել էլեկտրոնային կատարողական վարույթի և էլեկտրոնային ծանուցումների իրականացման համար անհրաժեշտ իրավական հիմքեր:

Միևնույն ժամանակ, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կատարողական վարույթի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգում գործարկվել է նոր ծրագրային մոդուլ, որի շնորհիվ կատարողական վարույթներով կատարված վճարումների մշակման գործընթացը ամբողջ ծավալով ավտոմատացվել և իրականացվում է 24/7 ռեժիմով: Գործարկվող նոր մոդուլի շնորհիվ գույքային բնույթի կատարողական վարույթներով վճարումները, ինչպես նաև կատարողական վարույթով գանձված գումարի բաշխումը, արգելանքներից ազատումը և պարտավորությունների ամբողջական կատարված լինելու դեպքում կատարողական վարույթի կարճումը հնարավոր կլինի կատարել ամբողջությամբ ինքնաշխատ:

Հարկ է ընդգծել, որ մի շարք փոփոխություններ են կատարվել նաև «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքում: Մասնավորապես 2023 թվականին Ազգային ժողովի կողմից ընդունվել է ««Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով նախատեսվել է հարկադիր կատարողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների զարգացման շարունակական վերապատրաստումների համակարգի ներդնումը, կարգավորվել են հարկադիր կատարողի փոխադրման հետ կապված իրավահարաբերությունները, ինչպես նաև ի թիվս մի շարք այլ բարեփոխումների նախատեսվել է հարկադիր կատարողների էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը սահմանել ոլորտը համակարգող նախարարի հրամանով:

ՆՊԱՏԱԿ 12. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՅԼ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոտարական համակարգի բարեփոխման համատեքստում մշակվել է ««Նոտարիատի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով ի թիվս այլնի բարելավվել են նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կարգավորումները, ընդլայնվել է նոտարի պատասխանատվության ռիսկի ապահովագրությունը՝ նոտարին, բացի պարտադիր ապահովագրությունից, հնարավորություն տալով ըստ անհրաժեշտության ապահովագրել իր պատասխանատվության ռիսկը նաև առանձին գործարք(ներ)ի մասով:

Արդարադատության նախարարության և Արդարադատության ակադեմիայի կողմից Զարգացման իրավունքի միջազգային կազմակերպության (IDLO) աջակցությամբ՝ ԱՄՆ Դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի (INL) ֆինանսավորմամբ մշակվել են

«Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու նախագծերը, որոնցով նախատեսվել է Ակադեմիայի նպատակների և դրանցից բխող գործառույթների պատշաճ իրականացման համար ստեղծել անհրաժեշտ ինստիտուցիոնալ հիմքեր և գործառնական մեխանիզմներ՝ հաշվի առնելով գործնականում արձանագրված խնդիրները և միջազգային չափանիշները: Նախագծերի փաթեթով անդրադարձ է կատարվել Ակադեմիայի՝ որպես անկախ և ինքնակառավարվող ոչ առևտրային պետական կազմակերպության կարգավիճակին ու ֆինանսավորման վերաբերյալ կարգավորումներին, կառավարման համակարգի կառուցվածքին և մարմինների միջև գործառույթների վերաբաշխմանը, ռեկտորի ընտրության կարգին, ուսուցման գործընթացի կատարելագործման ուղղված մի շարք հարցերի, ունկնդիրների և պրոֆեսորադասախոսական կազմի կարգավիճակին և այլն:

Հարկ է նշել նաև, որ Արդարադատության նախարարության կողմից մշակվել Վարչապետի աշխատակազմ է ուղարկվել «Փորձագիտական գործունեության մասին» նոր օրենքի նախագիծը:

ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ որոշմամբ հաստատվել է Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը:

Ռազմավարության 2-րդ բաժնով որպես Ռազմավարության և Ծրագրի լիարժեք և արդյունավետ իրագործման ապահովման մեխանիզմ նախատեսվել էր Ռազմավարության և Ծրագրի կատարման մշտադիտարկման խորհրդի (այսուհետ՝ Մշտադիտարկման խորհուրդ) ձևավորումը, ինչի հիման վրա Վարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1185-Ա որոշմամբ հաստատվել է Մշտադիտարկման խորհրդի անհատական կազմը: 2023 թվականի ընթացքում Մշտադիտարկման խորհուրդը գումարել է մեկ նիստ Վարչապետի գլխավորությամբ՝ 2023 թվականի հուլիսի 20-ին:

Նիստի օրակարգային 1-ին հարցի ընթացքում Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը ներկայացրել է դատաիրավական բարեփոխումների շրջանակներում կատարված գործողությունները: Մինչ օրակարգային 2-րդ հարցին անցնելը Մշտադիտարկման խորհրդի անդամները ներկայացրին իրենց

դիտարկումները, որոնց հիման վրա Վարչապետը հանձնարարականներ ներկայացրեց: Մասնավորապես՝ հանձնարարվեց ուսումնասիրել հանրային պաշտպանների կողմից արտաժամյա ծառայություններ մատուցելու համար լրացուցիչ գործակիցներ սահմանելու հարց և նպատակահարմարությունից ելնելով ներկայացնել լուծումներ, քննարկել ֆիզիկական անձանց գույքային վեճերի համար պետական տուրքերի վճարման մեխանիզմները և ներկայացնել առաջարկություններ, միաժամանակ՝ Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանին հանձնարարվեց՝ դատարանների շենքերի կառուցման, վերանորոգման և կահավորման գործընթացն իրականացնել միջազգային չափանիշներին համապատասխան, քննարկել Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի գործարկման և ֆինանսավորման հարցերը, շահագրգիռ կողմերի հետ քննարկել նոր հանրային խորհուրդ և դրան կից փաստահավաք հանձնաժողով ձևավորելու սկզբունքները և այլն:

Օրակարգային 2-րդ հարցի շրջանակներում Մշտադիտարկման խորհուրդը հաստատել է Ռազմավարության և Գործողությունների ծրագրի կատարման 2023 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը: